Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐՓԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի ԹԻՎ 8, ՄԱՐՏԻ 17-Ի ԹԻՎ 9 ԵՎ ՄԱՐՏԻ 19-Ի ԹԻՎ 10 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ թիվ 8 և 10 որոշումների վերնագրերը չեն համապատասխանում որոշումների բովանդակություններին (հատկացնել/տրամադրել) : Բացի այդ, որոշումների նախաբաններում ՀՀ կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 1477-Ն որոշմանը կատարված հղումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին, համաձայն որի հղումները կատարվում են հստակ և ուղղակի: Անհրաժեշտ է հղում կատարել վերը նշված որոշման համապատասխան դրույթին:

Թիվ թիվ 8 և 10 որոշումները համարակալելու անհրաժեշտություն չկա:

Թիվ 9 որոշման մեջ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» բառերն ավելորդ են: Բացի այդ, որոշման մեջ «ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արփի» բառերից հետո գրառված «համայնքային» բառն անհրաժեշտ է փոխարինել «համայնքի» բառով, իսկ «համայնքային» բառից հետո գրառված «միջոցառումների» բառը գրառելու անհրաժեշտություն չկա:

Որոշման մեջ համայնքային ծառայողների պաշտոնների անվանումներում «համայնքապետարանի» բառից հետո անհրաժեշտ է գրառել «աշխատակազմի» բառը:

Թիվ 10 որոշման անբաժանելի մաս համարվող հավելվածում նշված չեն վարձակալությամբ օգտագործման տրամադրվող գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասերի որակական հատկանիշները (հողի կարգը, ջրովի/անջրդի):

Բացի այդ, չի ապահովվել Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի պահանջը:

Կատարող՝ Շ. Շաքարյանց
01.06.2020թ.